ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

[ՎԱՆԴԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ]

ԳԼՈՒԽ 11

[Հուստինիանոսը, ավարտելով պարսկական պատերազմը, իր թագավորության 7-րդ տարում պատրաստվում է պատերազմելու վանդալների դեմ Լիբիայում։ Կարքեդոնի (Կարթագենի) արշավանքին մասնակցում էին նաև դաշնակից ղորքերը՝ ֆեդերատները— ջուՆերչտս|։

«...Ֆեդերատների[1] ղորահրամանատարներն էին Հայաստանի ղորքերի ղորավար Դորոթեոսը[2], նաև Սոլոմոնը, որ ղորավար Բելիսարիոսի տեղակալն էր (հռոմայեցիները սրան դոմեստիկոս են անվանում...)։ [Ֆեդերատների] ընդհանուր հրամանատարությունը արևելցի Սոլոմոնի ձեռքում էր, որ հռոմեական [պետության] այս հեռաստանից էր, այնտեղից, ուր այժմ գտնվում է Դարա քաղաքը...»։

ԳԼՈՒԽ 14

«...Երբ նրանք [բյուղանդացիները] հասնում են Կավկանա[3], բոլորին գտնում են մեծ սգո մեջ, որովհետև Հայաստանի ղորքերի ղորավար Դորոթեոսը այստեղ էր վախճանվել, ամբողջ ղորքին պատճառելով անչափ տխրություն...»։

ԳԼՈՒԽ 17

«Բելիսարիոսն այսպես շարքի դնելով ղորքը, շարժվեց Կարքեդոնի[4] վրա։ Հյուսլասպիստներից[5] երեք հարյուր քաջ ռազմիկներ ընտրելով, հանձնեց Հովհաննեսին, իր տնտեսին. սրան հռոմայեցիները անվանում են օպտիոն։ Նա հայազգի էր, անչափ խոհեմ և քաջ։ Նա հրամայեց Հովհաննեսին առաջնորդել ղորքը և առաջ անցնել ոչ պակաս քան քսան ասպարեզ և հենց որ նկատեր որևէ թշնամու, անհապաղ հայտնել, որպեսզի ստիպված չլինեն հանպատրաստից մարտի բռնվելու...»։

ԳԼՈՒԽ 18

«...Եթե Բելիսարիոսը այսպես չկարգավորեր զորաշարքը, Հովհաննեսին չհրամայեր առաջ անցնել, իսկ մասսագետներին էլ զորքի ձախից ընթանալ, մենք բոլորովին ի վիճակի չէինք լինի խուսափել վանդալներից: ...Ամմատասը ...վանդալների բազմությունը Կարքեդոնում թողած և հայտնելով, որ շտապում է դեպի Դեկիմոն՝, փոքրաթիվ և ոչ լավագույն զինվորներով մարտի բռնվեց Հովհաննեսի հետ: Նա սպանում է [Հովհաննեսի]՝ առաջին գծի վրա կռվող լավագույն զինվորներից տասներկուսին, բայց ինքն էլ ընկնում է՝ ցուցաբերելով մեծ խիզախություն: Ամմատասի սպանությունից հետո [նրա զինվորները] գլխովին փախուստի դիմեցին... Հովհաննեսը և նրա մարդիկ հանդիպածին կոտորելով հասան մինչև Կարքեդոնի դարպասները: Այս յոթանասուն ասպարեզ տարածության վրա այնքան շատ վանդալների կոտորած եղավ, որ տեսնողներին թվում էր, որ դա երկու բյուր թշնամիների ձեռքի գործ է...»:

ԳԼՈՒԽ 19

«...Հովհաննեսը և մասսագետները դիշերը վերադարձան մեղ մոտ, իմացան, իրենց հերթին էլ պատմեցին կատարվածի մասին և մեղ հետ գիշերեցին Դեկիմոնում»: